



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Christie's

891.99

U-35

891.542-1

U-35

6 NOV 2011

210
10837



ՄԿՐՏԻՉ ՄԱՐԻԿԵԱՆՅԻ



ԱՆԵՏԱՆ

Ե Ր Գ

գին 10 կ.

Handwritten signature or name in Armenian script.

891.542-1

U-35

Handwritten initials or mark.

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԻԿԵԱՆՅ - 1/2

ԱՆԵՏԱՆ

2534

Faint mirrored text, likely bleed-through from the reverse side of the page.




ԹԻՖԼԻՍ

Տպարան «Հեռու» և Տիպ. «ԳԵՐՄԵՍԻ»

1904

Дозволено Цензурою Тифлисъ 5-го декабря 1903 г.





ԱՆԵՏԱՆ Ա

Զմեռ էր մաայլ. ճամուտի հովտում
 Գետինը կարծես տնքում էր տքնում,
 Չիւնաթաղ Լօքի անտառն անսահման,
 Նզովում վայրագ օրերը անկման.
 Եւ ծանծաղ—կայտառ՝ Չայգետը յստակ
 Թաւալուն-օրան դէպ Գիւլաքարակ,
 Ծածկուած սառցային բիւրեղ շիրտերով
 Սողում էր պղտոր, խեղուած շշուճով.
 Իսկ նրա վերև՝ ուր Աշտ-սարեր
 Չուգահեռաբար դէպի հեռուններ
 Չգում են յետ-յետ—օռնում էր տրտում
 Գետը Գվալի ձիւնապատ ձորում,
 Ցուրտ էր կատաղի. մութ հորիզոնում
 Ամեն ինչ դաժան ճնշում էր հեծծում...
 Մե մշուշն անհուն, ծածկել էր աւեր—
 Ծերուկ Տորմակի սուրբ փլատակներ.
 Անյուշ բեկորներ, քարերը ցրում,
 Երբեմն կանաչ մամուռով ծածկուած,
 Ճերմակած գաշտեր և անրնական



ԲՐԻՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ս. Մ. Ե. Բ. Գ. Դ. Ե. Զ. Ը. Թ. Կ. Լ. Խ. Ծ. Ծ. Ծ. Ծ.



Կաղնիքը հսկայ, տձև ու դաժան,
 Եւ ցիր-ցան ճիւղեր փխրուն ու փթած,
 Սառցէ շիթերով ծանրաբեռնուած,
 Եւ կոր-հրդեհուած հաստափոր կոճղեր
 Կարծես թէ խորունկ քուն էին մտել...
 Դվայն ահարկու որպէս սև սապառ
 Մութ մշուշի մէջ թաղուած էր հպարտ,
 Այնտեղ էլ ոչինչ չկար կախարդիչ,
 Ոչ մի յիշատակ գարնան օրերից.
 Մի օր կապուտակ նրա վես կատար՝
 Պատել էր մռայլ սոսկալի խաւար,
 Անագորոյն մութ որ նրա դէմքից
 Խլում էր դիւթիչ փայլը խնդալից,
 Մերթ ունում էր սուր, բքաբեր քամին,
 Գրոհ տայով սգուր թմրած անտառին,
 Մերթ իմ կապոյտած, սփրթնած դէմքին
 Զիւնով ապտակում ուժգին ու ուժգին:
 Աչում էր շաշում, սուլում էր նա վաշ
 Եւ այնքան երկար, այնքան հոգեմաշ
 Որ տարերբը ողջ սօսկում էր սարսում,
 Կարծես լալայուշ նգովքներ տնքում.
 Հուացնում էր նա սուր ու անսահման
 Կարծես նողկալի քրքինջն էօլիան,
 Մերթ խորունկ ու իուլ, մերթ աղաչական
 Խախտում էր դժխեմ սուզը բնութեան:
 Հեռու ծառազարդ մեր սիրուն զիւղեր
 Մութ էին մռայլ և կարծես կոյտեր
 Լինէին սառած, ձիւնով շաղախած,
 Ցուրտ հորիզոնում ցիր ու ցան թափած.

Միայն հուանի սիրուն բարդիներ,
 Որպէս հեքեաթի նազիկ փերիներ,
 Մինչ եթեր անձուկ, համրապար բռնած
 Յոյց էին հանում զիւղերը ներհած.
 Որպէս փաղաքուշ սիրունու փափուկ,
 Զերմագին համբոյր մայրիկից ծածուկ—
 Նրանք երկիւղած, կարծես մալթանքներ
 Գրկելով միմեանց ուղղում էին վեր...
 Եւ ես խոսովայոյց սայլակում նստած
 Գնում էի լուռ—ուր անդուլ անսանձ
 Ծեծում էր ծեծկում բուքը անդադար
 Իմ նիհար, սառած կուրծքը ցաւազար:



Բ

Անճում էր ճշում բուրն ուժգին ուժգին,
 Ծղրտում երկար սուլում վայրագին,
 Զիւնով համասփիւռ վայրերը թմրած,
 Լալիս էին լուռ արեի ճաճանչ.
 Եւ լեռնաշղթան կարծես ամօթով
 Ծածկել էր դժգոյն դէմքը դիմակով...
 Մթին դիմակով, որ գննող աչքից
 Վրիպէր առեյի իւր պատկերն ու բիծ:
 Օֆ Սանյրօն Սանյրօն... այնկարծ դժնագին
 Ինչ որ վայնասուն, ըողոք մոլեգին
 Հասաւ ականջիս երկար ու հեծ-հեծ,
 Զգիտեմ ինչպէս նա յանկարծ հնչեց.

Մերթ Դիվալաչայ էր ձայնը թռչում,
 Հանգչում կատաղած ցուրտ ալիքներում,
 Մերթ արծուի նման վեր թևատարած
 Սգով համակում վայրերը սառած.
 «Օ՛ք Սանդրոն Սանդրոն...» քամու բերանում
 Չայնը սրտամաշ խաղում էր լողում,
 Եւ դանակոծում լեռների սառած
 Փեշերքը ձիւնոտ ուռած վայրացած...
 Հիւժում էր հեծծում սիրտս անդադար
 Պէտք էր ինձ գնալ, բայց ինչպէս գնալ,
 Մուժ էր գարհուրիչ, հոգեմաշ իաւար,
 Դիւային հովտում ճանապարհ չկար:
 Երկնը, շատ երկնք մուշ ու խռովայոյզ
 Ճնշում էի ես, անքում ցնորասուզ,
 Փոթորկում հովտում սպիտակապատան
 Բուքն էր աղմկում լոյ հոգոյս նման:
 Մի քանի բոպէ գարձեալ մտորում,
 Խուժաղուժ վճիւ մտքիս մատեանում,
 Եւ դէպի հովիտ իմ անվախ ձիանք
 Նետուեցին առաջ ազատ, համարձակ.
 Գուռոց ու տրօփիւն, մտրակի շառաշ,
 Չմռան լծի տակ ամեն ինչ թմրած...
 Սայտկա արագ վազում էր առաջ
 ձղերով խորին ձիւնը կարծրացած.
 Սահում էր զարկում ծերուկ ծաւերին,
 Երբեմն սայթքում սարի փեշերքին,
 Երբեմն շեղուն կանգ առնում յանկարծ
 Չիւնակոյտերում թաղում էր անանց:
 «Աւաղ իմ օրեր, իմ անուն անբիժ...»
 Հնչում էր շօրօր կարծես մօտիկից,

Վերք տալով հոգուս ճախրում էր նորից,
 Գուժ աղբրսելու դաժան երկնքից:
 Ախ ինչպէս խօսեմ, ես ինչպէս պատմեմ
 Թախծալի չոպու տանջանքը դժխեմ.
 Օ՛ր ինչպէս պատմեմ ուռած ու մարած
 Կուսական աչեր, օրն այն մրրկուած.
 Ես ինչպէս պատմեմ իմ ընթերցողին
 Կայտառ Չայգետի երգը լալազին,
 Անհատ տարափով շեշտակի թափուղ
 Չիւնը մահաշունչ, ցուրտը ցնորոց.
 Եւ կամ հիւրընկալ զետնի երեսին
 Չղարշը փռում կարծր ձիւնային,
 Աչա-սարերից մինչ Լօքի անտառ
 Ականջիս հասնող սուգը միալար...
 Օ՛ր զժուար է շատ. բայց ես կփորձեմ
 Պատմել իմ սրտի սե յուշը դժխեմ,
 Խօսել սոսկալի այն դժոխային
 Այն եղեռնալի պատկերի մասին:



Գ

Խաւար Քարհանքի հովտում ցաւալի,
 Ոլորտուն ձգուղ դէպի Չամանլի,
 Ծեկ—աղբիւրը ցուրտ հասում էր գուժկան
 Մն ճղիածամի այն անփոյթ վկան:
 Այնտեղ տարերքը տնքում էր նւում,
 Լեռները ճգնում ճերմակ պատանում.

Զրեբը սառած, բոյսերը մեռած,
 Հեծկտում էր ողջ առտառը թմբած.
 Երկինքը կարծես մի ըսպառնական,
 Խարոյկ աչքերով կատաղի գագան,
 Իւր անհուն-անծայր կրծքից սևաթոյր
 Թափում էր նորից ձիւնն առատ—անզույ:
 Չեզ-ազբիւրիկն էլ իւր անագորոյն
 Նեղ գերեզմանից մահն էր գովերդում,
 Իսկ նրա գլխին, կաղնի մի բարձրից,
 Քարշում էր կարծես ինքն իւր պատկերից...
 Տխրում էր սարսում հովտում անմեկին
 Զարզանդ արհեստից իւր չար դիւային,
 Նրա ճիւղերին մի աղջիկ գամուած,
 Արցունք էր լցնում ազբիւրը սառած.
 Պառնէր, սատամաշ այն դժոխային,
 Այն քսամենելի տխուր տեսարան,
 Եոյսը ցած ձգած գլուխն ուտերին,
 Կեանքն էր հեկեկում իւր օրհասական,
 Նրա մերկ, տկար, մարմինը մարմար
 Կապած էր ամուր վիթխարի ծառին,
 «Աստուած» էր հապիւ ճշում միայար
 Նրա վիրաւոր գայրացած հոգին.
 Անգամ դժոխքի եռուն Լամբոսեան
 Խորխորատներում հուր ու բոց այնքան
 Չէր լինիլ, որքան կար տանջանք լիւզն
 Բանաստեղծական սերած Քարհանքում:—
 Գեղեցիկ էր նա իւր ամբողջ կազմով,
 Ընդհանուր տեսքով և ողջ էութեամբ,
 Սակայն հայկական աչքերը միայն

Պատմում էին ցաւ, տանջալից մի բան.
 (Աչերն են միայն դիւթում թաթազին
 Խեղճ բահաստեղծի սիրատապ հոգին,
 Ինչպէս վավաշոտ մարդուն ջերմագին
 Տարփածու կնոջ անկողնի շոքին):
 Գեղեցիկ էր նա. այնքան գեղեցիկ
 Որ չէր կարեկցում նրան սև երկինք,
 Նա ուներ քնքոյշ կուսական պատկեր,
 Զլացնող մարմին, խայթոզ հայացքներ.
 Նրա ալեկոծ կրծքի զոյգ զարդերն
 Էլ չէին սիրոյ անուշ ազբիւրներ,
 Ուտերից իջած խոպոպիկ մազերն,
 Ծածկել էր նրանց վարդագոյն ծայրեր.
 Եւ փոքրիկ, գունատ շուրթերը զող-զող.
 Եւ աչերն առատ արցունքով այլուող
 Անեծք էին լոկ երկնքին ուղղում,
 Նրա դժնդակ պէմքը այլայլում:
 Զփումէր միմեանց ազգրերը սառած,
 Մատերը կծկում կամ բացում յանկարծ,
 Ուտերը շարժում, մերթ ակամայից
 Մլում «ախ-աւալ» սրտի խորքերից.—
 Դողում էր լռիկ, սրսբթում, ցնցում,
 Ծնոտներն արագ միմեանց էր զարկում,
 Եւ անվերջ հոսող արցունքը խեղդող
 Զիւնը հալելով անցնում էր սառ հող:



7

Նայում էի լուռ խաչած աղջկան
 Սառնասրտութեամբ իբրև ուրուական,
 Աչքերիս առաջ երազ էր նա խոր—
 Մի գարհուրելի միրաժ ահաւոր.
 Երազ էր այս քանի որ մի ձայն,—
 Մի փոքրիկ շշուկ չկար մարդկային,
 Եթէ ոչ դժբազդ լրեալի անհատ
 Թիւրընթռնելի խորին հառաչանք,
 Երազ էր, երանգ քանի որ սառած
 Աղբիւրը չունէր իւր նախկին կարկաչ,
 Երբ սիրտ թռթոցնոց գարնան օրերին
 Կեանք էր ներշնչում սիրահարներին.
 Նրա ափերին մի օր ծիծաղկոտ
 Դէպի վեր ցցուած թմբերը ժեռուտ,
 Չմուսն տագնապից ուռնում նման
 Կարծես դողալով օրերը անկման
 Իրանց վեհութեան, ցուրտ կատարներով
 Բողոքում էին ահ ու ախօթով.
 Երազ էր թուււ, քանի որ էլ կեանք
 Չկար սարերում, ուր մի ժամանակ
 Չովն էր շշնջում զիշերը խաղաղ
 Չգում ինձ Եզեմ, կամ սիրուն հալլաղ,
 Ուր ապրում էին զիւզական ախլիկ
 Հիւրի-փարինէր—չքնազ, գեղեցիկ,

Նոր սիրարժան մինչև ուշ գիշեր
 Երգում էին սէր, գեղգեղում յոյսեր.
 Ուր արևը ջինջ, փիբոյզ երկնքից
 Գեղ Ֆաուտ-Իւրդին օրհնում էր բարձրից,
 Եւ հրաշանկար Դիւաբարակին
 Համբուրում անվերջ, լզում ջերմադին.
 Երազ էր թուււ աչքերիս մաբած,
 Երկար ու բարակ մի երազ անանց,
 Երազ, որ անգուսպ երկիւղի ցանցից
 Աստիճանաբար ազատում էր ինձ.
 Մի փոքր անվրդով, սակայն թուուցիկ
 Տանջում էր ինչ որ երկիւղ ինձ փոքրիկ—
 Թէ «չեն կասկածիլ արդեօք վայրազին
 Չար գիւղականներ իմ հոգու մասին...»:
 Եւ տառապեալի գունատ շուրթերին
 Կարգում էի լուկ մահալուր թախիծ,
 Հազիւ հազ լսում տըուր, որտարեկ,
 Նրա բերանից հողեմաչ մի երգ—
 «ՕՖ երկինք, երկինք, սե ի սե անբաւ»
 Երգում էր ցաւով զօհը սրտագրաւ;
 «Ասա ո՞վ եմ ես, ինչո՞ւ եմ մենակ
 «Չիւնի տակ դարձել կենդանի գիակ.
 «Ասա պիտի երբ տանջուելու այնտեղ
 «Թռչեմ ուր գիտէն մեղապարտ—անմեղ,
 «Երբ պիտ սեղմուած անուոյր—յաղթող
 «Հերոսի կրծքին զգամ մահու դող.
 «Կամ ո՞վ է ասա սիրտս կրծոտում
 «Տախտակը կրծքիս արիւնով ցօղում,
 «Ինչ հուր է անչիջ այս տարտարոտում

«Ինձ այրում լափում մահառիթ ցրտում.
 «Օ՛ կարեկցեցէք գեթ, մռայլ սարեր,
 «Պահ մի սգացէք վիճակս անել.
 «Գեթ դու սփոփիր, ալևոր անտառ —
 «Հրեշտային գործի անմեղ յուշարար,
 «Ես չունիմ արցունք, ես չգիտեմ լալ.
 «Չգիտեմ խոկանլ, չգիտեմ զգանլ...»



Ե

Հնչում էր, հանգչում օրուայ փոթորկում
 Երգն աղիողորմ, ձիգ և բեկբեկուն,
 Պահ մի ընդհատում վշտաբեկ բնութեան
 Քունը անհանգիստ և լացն ու կական:
 Տրօփում էր, խաղում սիրտս անագորոջն
 Իւր աղմկայոյզ խաւար վանդակում,
 Եւ մի գերբնական ոյժ էր գալարում
 Փետացած ու թոյլ իմ երակներում:
 Էլ չէր տարափում ձիւնը հոգեմաշ,
 Ոչ բուքը խրոխտում սրտիս հետ անհաշտ,
 Ոչ կայսր խղճուկ տնրում ու ծիւրում,
 Ոչ արցունք թափում սառցապատ աղբրում.
 Միայն մեղմազին, յիմարի նման
 Յաճախ ձայնափոխ ու աղաչական
 Չիւնախառ քամին սուլում էր հեռուից,
 Հանդարտ ու անդճր կարծես կարեկից:
 Ես առաջ անցայ. մօտեցայ ծառին

Եւ յանկարծ ուժգին, յանկարծ հրճուազին,
 Չգիտեմ ինչու մի ուրախութեամբ
 Սիրտս բարախեց մտքիս հետ անկապ. —
 Եւ ես ուզեցի կարծես թէ սեղմել
 Գրկիս մէջ անվերջ նրան համբուրել,
 Բայց նա զայրոյթով նողկալով ինձնից
 Գարշեց սարսափով խաշի վրայից:
 «ՕՖ գնա... ասայ, պատանի սայլորդ,
 «Քիչ էլ ցնորուն թող սիրակարօտ,
 «Քիչ էլ թող սիրուն տպագաս յիշեմ,
 «Քիչ էլ պարուրեմ վշտերս դժխեմ.
 «Մի ժամ է ամբողջ այստեղ մահազող
 «Մլում եմ Աստուած, մզկում օգնող,
 «Սակայն շունչ չկայ այս զար ու դատարկ
 «Նզսված հովում մի ճար կամ ճարակ.
 «Կնա՛ս դեզերուն, դու թափառական,
 «Էլ չեմ կարօտում ոչ մի օգնութեան.
 «Մթնում է արդէն. գետինը ձիւնոտ
 «Պիտի քուն մտնի, մութ երկինքը խրոխտ
 «Պիտի կատաղի, դէ՛հ գնա՛ եզրայր,
 «Թող քիչ էլ մխամ, բիչ էլ գէպի վեր
 «Արցունք ուղարկեմ, սիրտս բաց անեմ
 «Ու գարշ աշխարհից կորչեմ ազատունեմ...
 «Օ՛ երկչոտ եմ ես. չէ՛ սր սիրելին
 «Վառուած ջերմաջերմ սիրողի սիրով,
 «Պիտ ոտնատակէ բռնութիւն, պատրանք,
 «Մերձաւորների սպանել զուրգուրանք.
 «Օ կոյր եմ երկչոտ... երբէք, իմ լեզուն,
 Չէր ուզում յայտնել սուրբ ճշմարտութիւն,

«Բայց ախ՛ թող մնա... գնա իմ անդին,
 «Տանը հաղորդիր բարևս վերջին,
 «Ասա կեանքը սուղ՝ հանապազ ժպտուն,
 «Որ տառապելից փախչում է խորշում,
 «Նա սիրում է փող, սրտեր բաբախուն,
 «Բայց աւելի շատ աղտ ու զեղխութիւն,
 «Ասա յաւիտեան եթէ մեր սրտեր
 «Խնդան ու թնդան կենդանի մնանք,
 «Լոկ այնժամ կզգանք սր օրերը մեր
 «Կարճ է աւելի քան թիթեռի կեանք,
 «Դարձիր դէպի գիւղ, գնա, սիրելիս,
 «Գնա հեռացիր... թող ինձ ազօթել
 «Մահու սարսափից ցնցում է հոգիս...
 «Զգում եմ արդէն, ախ քիչ էլ... քիչ էլ...»

2

Տիրեց լուծիւն. էլ կենդանաբար
 Մի շշուկ չկար հոգուս մխիթար,
 Բայց նրա վառուղ աչքերը անմար
 Խնդրում էին դեռ «գնա՛ր, հեռանա՛ր...»
 Լուռ էր ամեն ինչ. սակայն կատաղած
 Սիրտս չէր լուսւմ գայրոյթով լցուած.
 Նա վրէժխնդրութեամբ ճիւղի նկարչին
 Ուղղում էր նզովք բիր դժոխային.
 Եւ միտքս մոլար, կարծես ցնորուած
 Դարձ երազներէ ճնշումով անանց,
 Մի քայլ դէսի յետ ակամայ-անկապ

Սկսայ խօսել կծու սաստկութեամբ—
 «Օ ասա աղջիկ շարաբազդ աղջիկ»
 Դիմեցի գոհին ես շնաշխարհիկ.
 «Ինչո՞ւ աչքերում քո սէգ, աննման,
 «Զէ փայլում հիւլէ մի վրեժխնդրութեան.
 «Ինչո՞ւ շոյելով դու աւանդական
 «Ուրի՛ն յիտաղէ՛մ՝ չես ուզում խաղաղ
 «Մօռանալ «ախ-վախ» վրեժ առնել միայն
 «Քեզ այդպէս անգութ որսողից ճիւղաղ.
 «Գուցէ այլ և այլ գազիր միտումներ
 «Խայտառակութեամբ հոգիդ են գերել,
 «Մեռչկոտ բօշո՞ւ... գուցէ լրբարար...
 «Բայց ասա ինչու ուզում ես մնալ...»
 «Օ բաւ է անմիտ » ասաց նա անել
 «Մի ցնցիր սրտիս արիւնոտ լարեր,
 «Բաւէ պատանի հեռացիր, ինձ թող
 «Միմեանց հասկանալ մենք էլ շենք կարող.
 «Ես չեմ անիծիլ կրքերով լեցուն
 «Իմ տխրահուշակ ոսոխին սպանիչ
 «Աստժոյ տանն է նա ըսպասաւորում
 «Նյետեղից կառնէ իւր զօրեղ պատիժ.
 «Նենգը չարաչար ծիծաղով գաժան
 «Կեանքի նիւթերին ընդմիշտ ձեռնահաս
 «Զի մնալ խաղաղ, մի օր ինձ նման
 «Նա էլ կզգայ դող, սոսկալի օրհաս.
 «Բայց առ ժամանակ թող ապրէ, խնդայ,
 «Թող ես հող մտնեմ և ընդմիշտ թնդայ
 «Իմ ողբերգական մահը տանջալից,
 «Իմ վիշտը մաշող, իմ հոգու թախիծ.



«Թող ամենուրէք պատմեն իմ անել
 «Դառնալի կենաց վերջին ըուպէներ,
 »Մորդկային սրտի անհուն գուրգուրանք
 «Որ թունաւորեց իմ արևս ու կեանք.
 «Պատմեն վայրագին կիրքը հրատապ,
 «Լկտի մտորման մահալուր տագնապ,
 «Եւ իմ յալաձայն ցաւալուչ երգեր,
 «Իմ պատառտուն սրտիս խոց-վերքեր,
 «Եւ ձիւնն ու քամին... բոլորը բոլոր—
 «Սուլոց ու շոինդ-դժնդակ օրօր,
 «Եւ երկնքի սև՝ խուժադուժ տեսիլ,
 «Ճակատագրական վայրենի վճիռ.
 «Թող պատմեն երկնք քոյրերիս սիրուն
 «Տանը վաւուռն միշտ սիրախօսուն—
 «Որ կինը դատարկ չէ լոկ խաղալիկ
 «Այլ գեղեցկութեան և սիրոյ աղբրիկ.
 «Որ մեծ է անհուն՝ կանացի հաւատ
 «Եւ շուտ բռնկուող սէրը հրացայտ,
 «Որ թոյլ են նորա՝ անստնձ բայց կարող
 «Չարոց երգերին անհոգ ձայնակցող...»




Է

Չառանցում ես դ՛ն... ցնդած անհոգի
 Ամայի հովտում գուցէ և ոգի
 Դու մի պժգալի ձիւնի հետ սարսուռ
 Փռող այս դատարկ վայրերում տխուր...

Օ դու չարագոյժ... ես անպնդային
 Մի խրոխտ գոռոցով նետեցի ուժգին
 Նրան փաթաթուած կշկուռն ու պարան
 Անհուն դայրոյթով դէպի հեռաստան:
 Եւ նրան տեսայ ազատ, ամօթ խած,
 Որ հագիւ անգոր ձեռքերով ծածկած
 Իւր անգամը մերկ՝ հրեշտակի նման
 Թէն այլայլուած նայում էր անձայն.
 Չգիտէր ծածկէր կուրծքը սիրաւեր
 Նրա անբաժան մարմար թմբերով,
 Թէ աւելի ցած կամ աւելի վեր
 Իմ հայացքներից պաշտպանէր փութով,
 Եւ անել-անթարթ նայում էր ապշած,
 Չգիտէր օրհներ ինձ թէ անիծեր
 Կեանքի դժնափայլ վերջալոյսի տակ—
 Նա աւելի շուտ ազի անեծքներ
 Պիտ թափէր զլիխս, եթէ լայակամ
 Շուրթերը դողդաջ հուպ գալով միմեանց,
 Կորզէին անկման արցունք ու թախիժ
 Նրա թունաւոր աւերած սրտից.
 Բայց փոփոխական իմ սիրտը դատարկ
 Թօթափել էր զուժ, մորմորիչ կապանք,
 Եւ բիրտ յատակում՝ մխոււմ էր շատ խոր
 Ինչ որ խարդաւանք մի խորհրդաւոր:
 Չգիտեմ ինչն՛ անհոգ, տաքացած,
 Մօռցել էի ցուրտ, երկիւղ ու Աստուած,
 Եւ թէ այն ժամին փորձողը պատիր
 Մօտենար հոգուս ես չէի սարսիլ.
 Տրօփում էր սիրաս կրքերով եռուն,

Լկտի երազով տարփանքի բովում,
 Այնտեղ գիւային գուգիռն էր անմար
 Չար միտումներով կրծոտում նրան.
 Այնտեղ շարահնար մի իժ էր սողում,
 Հանթում, յօշոտում և մի ստոր անուն
 Ճիւղ վարպետի ուզում էր ինձ տալ,
 Միշտ յիշեցնելով առիթը յարմար:
 «Օ՛ եթէ խարոյկ՝ կարելի լիներ
 Ճարճատող խարոյկ ծառի տակ վառել,
 Ինչպէս պիտի նա զօրանար նորից,
 Փարուէր իմ վզով...» ասում էի ինձ.
 «Ինչպէս անողոք պիտի սրսրթող
 Պարկէի անվախ կրծքին մահադող,
 Որպէս գինովցած մի ցոփ դերասան —
 Պիտ ընդինգայի ջարդէի նրան...»
 Եւ մինչ տանջանքն իմ վավաշոտութեան
 Յիշեցնում էր սև միրաժ — ապազան,
 Աչքերս խայթող ոտքերը ճերմակ
 Թագնուում էր ցուրտ շրջագգեստի տակ.
 Նորից սանձարձակ կիրքս էր բռնկուում,
 Ես տկամայից նրան մօտենում,
 Եւ մինչ երկմտած տներում էի լուռ
 Դէմքիս գգացի մի անուշ համբոյր.
 Ես սթափուեցի. ու մէկ էլ հպեց
 Ազդիկը ճակոխի շուրթերը սառած,
 Եւ վշտի ժպիտ մի ճեպանց սահեց,
 Նրա սևորակ աչքերում ուռած.



Եղբայր նա ասաց խեղդուած շշուկով
 Ինչ էս անելու այստեղ մնալով
 Մթնում է արդէն. բայց ինչո՞ւ համար
 «Տխուր ես այդպէս սիրելի եղբայր...»
 «Եղբայր» տարածամ այն խօսքը անգիւր
 Որպէս նետ անշեղ կամ սուր սայրասուրը,
 Լրբախօս սրտիս յարերը շանթից,
 Աչքերս թրջեց, միտքս պարուրեց.
 Այնքան ներդաշնակ ականջիս հնչեց
 Անունը «եղբայր» ազդիկը մատաղ,
 Որ վայրկենաբար արիւնս սառեց.
 Յիշեցի մահու արիւնոտ մանգաղ.
 Նորից սկսայ մրսել, դողացնել,
 Ցնցուել. վախենալ և նորից անել
 Դրութեամբ խոկալ, մտարել երկար.
 Տանջալի գզմամբ և ամօթահար...
 Նորից մռնչաց բուրբ լեռներեց,
 Սփռելով սառսուռ, երկիւղ տանջալից,
 Նորից վայնասուն տիրեց ցուրտ հովտում
 Նորից հեծկլտանք, նողկալի ճնշում.
 Օ՛ սև ճգնաժամ... նորից դժնագին
 Երկինքը յանձնեց մեզ իւր խաղերին,
 Չիւնը բրդէլով, ու-սեխն տալով,
 Դունչաց ուժեղ՝ զայրոյթի յացով.
 Նրա մթնագին կամարին անծայր
 Դիւր շեկաւ կարծես անունը «եղբայր»,
 Սևով համակեց ախրազէմ Լօռին,

Թանձր սև, խօլ մութ—կէս գիշերային.
 Գարշում էի ես իմ կեպտոտ, գծում,
 Իմ բարեխոսական նշոված հոգուց,
 Թէն անկարող քամել դառնագին
 Զղջման բաժակի մրուրը վերջին.
 Եղբայր ու եղբայր խղճուկը հովտում
 Զիւնի երեսին տնքում էր կանչում,
 «Մթնում է եղբայր, միթէ դեռ անյազ
 Պիտի ծրծորենք դառնութեան բաժակ».
 Օ գնանք՝ գնանք՝ ասացի մարած
 Աչքերս մռայլ երկնքին ուղղած,
 Եւ կաթիլ արցունք՝ իբրև յիշատակ
 Թողեցի աղի ես հովտում վայրագ,
 Գնանք, հեռանանք ասացի նրան
 Եւ ընդհանելով մաղթանքս զղջման,
 Թափ տուի իմ ցուրտ, տհաբեկ սրտից
 Մաղձ ու մտորմունք, ճնշում ու թախիծ.
 Գնանք ծանր է ախ... օ շատ դժուարին
 Խեղճը շշնջաց մեղմ ու լալազին,
 Եւ իմ օգնութեամբ փոքր ինչ վարանուն
 Հազիւ բարձրացաւ նստեց սայլակում.
 «Խօսիր ասացի բաղդազուրկ աղջիկ,
 «Ձուտով մենք հանգիստ տանը կլինինք.
 «Ասա ով էր մեղկ, այն ստոր անհոգին
 Որ քեզ կտակեց կսկիծ անմեկին»..
 Նա լուռ էր, անխօս. ցուրտ ափերի մէջ
 Իէմբը դարկացած իսկոյն թագցրեց,
 Եւ անեծք էր լոկ ուղղում թունաւոր—
 ձմլած սրտից դէպ ախրոջ աթուռ.

Ես էլ լռեցի. և ցաւակցելով
 Ճակատները թաց՝ շոյցի ձիանց,
 Եւ զանգակների տարբեր դողանջով
 Սայլակս գութկան սլացաւ առաջ:



Թ.

Ես նշանուեցի—պատմում էր նա ինձ
 «Գրգռած հայրիկիս սպառնալիքներից,
 «Որ ստիպում էր ինձ՝ ամեն օր-գիշեր,
 «Քահանայի կին անպատճառ լինել.
 «Նշանածն իմ հեզ դեռ դպիր էր սոսկ
 «Քաղաքի հարուստ մի եկեղեցում,
 «Ձուտով ստանար պիտ կրօնաբորբոք,
 «Քահանայական հոգևոր կոչում.
 «Նա սիրում էր ինձ. բայց կարծէս թէ իմ
 «Սէրը իւր սրտին օտար էր անհիմ,
 «Կարծէս հենց այնպէս լոկ ձևի համար
 «Գուրգուրում էր ինձ շոյում անգաղար.
 «Իմ սիրտը բնաւ չէր ընտրել նրան
 «Իբրև կարեկից յաւիտենական,
 «Արգելում էր ինձ Սանգրօին ճիւղ
 «Կոչել ամուսին ուրախ ու խաղաղ.
 «Թէպէտ նա երգուից իւր գծում հոգով
 «Ինձ սիրել անշափ մինչև գերեզման,
 «Բայց ես անգամ սուտ՝ մի շեղ կարծիքով

«Չի հաւատում նրա կեղծ երգման,
 «Օ՛ ա՛յո ա՛յո, վկայում էր լուռ
 «Ատելութեամբ լի սիրտս ցաւտտանջ,
 «Որ նա չգիտէր հաւատ սիրալուր,
 «Ոչ արցունք, ոչ երգ, ոչ վշտի թառանջ...
 «Երկանը շատ երկան պիղծ համբոյրներով
 «Իէմքս ոգոգեց դիւային ժպտով,
 «Հրէական վարպետ շոյորորթութեամբ
 «Կրծքիս հարուածներ տուեց հրատապ.
 «Սակայն պատմելու վիշտս սրտմաշուկ
 «Չունէի երբէք փոքրիկ իրաւունք,
 «Կարկամամ լեզուս չէր յայտնում բողոք
 «Ոչ տրտունջ՝ ընդդէմ գործի անողոք.
 «Նա ինձ փախցրեց. և մութ գագայում
 «Ցեխոտեց, ջնջեց իմ մաքուր անուն,
 «Չիւնր ցրելով ձեծկում էր քամին
 «Չուացնում ձայնո՛ւ խոր անզնդային,
 «Եւ լոյսը օրուայ ազօտ ու նսեմ,
 «Խաւար մթնազին՝ սե խաւար դժխեմ,
 «Օ՛ սոսկալի է մութը վայրագին
 «Պարուրում է նա համայն շարերին...
 «Եւ խլեց անբիծ պատիւս փայլուն,
 «Երազ ապագաս, բաղդ ու կուսութիւն,
 «Եւ բիւր յոյսերի լեցուն շտեմարան,
 «Եւ պայծառ օրերն իմ կենաց գարնան...
 «Միայնակ ու մերկ ձեան տարափի տակ
 «Կապեց ինձ ծառին և վիշտ, անարգանք
 «Սրտիս թողնելով, հեղնելով հեռու
 «Չքացաւ Սանդրօն առանց սոսկալու»

Առատ արցունքն էր միայն զուրս շորթում
 Նրա կոկորդից տխուր պատմութիւն,
 Բիւրեղ արցունքն էր միայն վկայում
 Նրա խօսքերին երբ ցած էր հոսում.
 «Օ ես սիրնցի... մրմնջում էր նա
 «Եւ լոկ մի անգամ երկինքը վկայ
 «Եղաւ առաջին սիրոյս խոստումին
 «Եւ իմ սիրածի անհուն հրճուանքին.
 «Այո սիրեցի՛ բայց ոչ հոգով բիրտ
 «Վայրասէր Սանդրօ. այլ մի մաքուր սիրտ
 «Որ ինձ թողնելով իմ անարգ անկման
 «Պատճառը գարձաւ... սիրեցի նրան...»




†

Ես էլ սիրեցի, քոյրիկ աննման
 Ասացի նրան մխիթարական
 Եւ կարեկցական փափուկ մրմունջով
 Երկիւղածութեամբ կուրծքը զրկելով.
 «Ես էլ սիրեցի՛ ցաւտտանջ աղջիկ
 «Սակայն չգիտեմ ինչպէս իմ փոքրիկ
 «Սիրած էակին ես փաղաքեցի,
 «Չգիտեմ ինչպէս նրան սիրեցի.
 «Սակայն սիրեցի՛ բուռն ու անսահման,
 «Նրա կրակոտ աչքերը վառուող,
 «Սակայն երգուեցի նրան յաւիտեան
 «Լինել ազօթող, լինել օրհնեղող.

«Սիրեցի երկի՛նք, կապուտակ երկի՛նք
 «Իւր աստեղազարդ խօսնակ կամարով,
 «Սիրեցի երկիր, պատկառող անձինք,
 «Անհուն հրճուանքի՛ անհուն ժպիտով,
 «Սիրեցի դաշտեր ցնորագին սիրով,
 «Ծառ ու ծաղիկներ վազորդեան թափով,
 «Սիրեցի գիշեր, սիրեցի վարդեր,
 «Սիրող բլբուլի բեկ-բեկ դայլայներ...
 «Եւ ապա շքնաղ սիրեցի մի կոյս
 «Անտակ գորովից ցնցող համբույրով,
 «Նա եղաւ միակ առարկան սիրոյս,
 «Միակ բանալին փոթորկուած հոգուս...
 «Օ իմ հրաշագեղ Անետան սիրուն՝
 «Լոկ ինձ հասկացրեց երգ ու հեշտութիւն,
 «Ախ ինչպէս պատմեմ տառապեալ բուրիկ
 «Եւ սիրոյ օրեր եւ սեւ արհաւիրք.
 «Ես շատ եմ երգել, ես շատ եմ տանջուել,
 «Չատ եմ երազել, նորից մօռացել,
 «Պատանեկական դատարկ ցնորքներ
 «Չատ են հրապուրել ինձ ոգևորել,
 «Չատ եմ քուն մտել բնութեան գրկում—
 «Ուր գովն էր քնքոյշ մագերս ցրում,
 «Անգործութեան մէջ ուռիների տակ
 «Անվերջ տենչանքներ շնչել եմ անյագ...
 «Երբեմն ամուսն տօթ գիշերներին
 «Դուրս գալով դապից գէպի արօտներ
 «Հասնելով աղբրին փշում էր քամին
 «Մասնցնում ճակտիս քրտնակաթիլներ,
 «Եւ ես աւելի վառուած յոյսերով

«Ծծում էի թարմ օդը կենազարկ,
 «Անշափ հրճուանքի հաւաչանքներով
 «Խանկարում վճիտ աղբիւրի ծփանք.
 «Բայց աւաղ անցան... ինձ օտարութիւն
 «Բաղբը արսորեց և այժմ խանգով
 «Ես վերագարձած փնտրում եմ փնտրում
 «Անետայիս գեղ. բայց նա էլ չկայ...»
 Լսում էր նա յուս իմ թոթովանքներ
 Ծծելով անգուսպ արցունքի ճնշում,
 Պատրառտ էր կարծէս նա ինձ աւետել
 Կամ գուժել մի բան, մի ուրախութիւն.
 Եւ յիշողութեան անտակ ժխորում
 Աղօթում էր մեղմ «Աստուած» մըմնչում,
 Աչքերը սեղմած խիտ յօնքերի տակ
 Նայում էր մաղձոտ երկնքին անյագ.
 Աղօթում էր նա՝ իսկ ես մտորում,
 Չիանքս հետում, սայլախ վաղում,
 Եւ անիւնների պտոյտը անձայն
 Անտառը մօտիկ յնցում, տատանում:



ԺԱ

Իրիկնագէմ էր. սև կիրակնամուտ.
 Սպառնում էր մեզ գիշերը փութկոտ,
 Նայում էր կարծէս և աղաբարբում
 Ջուտով հեռանալ-փախչել զէպի տուն.
 Արգեն շատ հեռուից գիւղի ձիւնածածկ
 Փայլում էին ցած՝ կտուրներն անկարգ,

Ծուխը ճերմակուն մութ հորիզոնում
 Հսկայ ծաւալով լողում էր օդում.
 Նոր էին վառուել ցոլուն ճրագներ,
 Որպէս սև հողում ցանած գոհարներ,
 Օդաների նեղ դաան անցքերից
 Վառում էին թոյլ, բայց մխիթարիչ.
 Եւ թանձր, մօտ-մօտ, մէջ խոր մթութեան
 Սև հորիզոնում առասպելական,
 Որպէս ցիրուցան կայծերի կոյտեր,
 Ազգում էին ինձ բերկրալի յոյզեր.
 Գնում էինք մենք. միաժամանակ
 Սարերը ձիւնոտ սրպէս խրտուիլակ
 Սարսափ տարածող՝ մեզ հետ միասին
 Վազում էին մունջ, տեսքով դժնազին...
 Եւ ձգնում էի կարծէս ես անբան
 Մի ցուրտ վհի մէջ նեղ-հեքիաթական,
 Ուր կար մարդկային մտքերին օտար
 Անհամ արկածներ, ցոյցեր մահարար...
 Ուր կար անբարի հեզ-ցնորական
 Արհաւիրք-երազ սիրահարական,
 Գերբնական տխուր, մեղկ ղեղերուններ,
 Եւ կախարդական հալ ու մաշ ղէմքեր
 Վերջապէս ուր կար ալ-արեան ծովեր,
 Միրագրուժ կուսանց մահառիթ խաղեր
 Ուր միայն չկար ներկայիս մուրաբ
 Գարշ կրօնաւորի հաւատամբը շար.
 Ահ և ես գաշտերն այն շրջապատում
 Թուխով օրան-օրան լեռներով մաշլ,
 Կարծում էի լոկ դաժան, մահատան.

Նախապաշարման գարհուրիչ մի վայր.
 Երբեմն սուզուած մտորման օվկիան
 Հեգնում էի բիրտ հարուածները ձեան,
 Որ կատաղարար ծեծկում էր սառած
 Մեր մումուռ ու գուրտ՝ երեսները թաց.
 Եւ երբ շեղելով սայլակս գծից
 Թռչում էր ձեան տակ պահուած քարերից,
 Զանգերի ցնցող սուր աղալակից
 Թափում էի բիւր մտքերս նորից,
 Եւ նայում նայում դէպի հորիզոն—
 Գէպի փոթորկուած տաքերքը խամրուն...
 Օ եթէ արև փայլեր գեղ վարնան
 Ես կըքնէի խաղերը բնութեան:
 Վերջապէս տանջուած արդէն կենամար
 Թողել էինք յետ դաժան ողբավայր,
 Արդէն շնորի ոռնոցը բարակ
 Լսում էր մազձոտ, սուր ու ներդաշնակ.
 Մեր առաջ մենիկ, շոյուն լոյսերով
 Զուգուած էր փայլուն գիւղը սառուցով,
 Եւ պահնորդների բայաթիքն անուշ,
 Լսում էր թովիչ, հնչում ցաւայնուշ
 Հնում էին խեղճ՝ ձիանքս տրտում,
 Ռնգունքներից հուր—գոլոշի փչում,
 Իսկ ես ապշելով անքում ցնորագին,
 Կոյսը ազօթում ձեռքերը կըծքին.



ԺԲ

Դե՛հ մնաք բարով իմ արև ու կեանք՝
 «Աղջիկը ասաց հէնց որ գիւղ մտանք,
 «Մնաք բարով սէր, հայրենիք սիրուն,
 «Իմ անփոյթ օրեր և գայոց զարուն,
 «Ո՛ւֆ մնաս բարով երկինք սևաթոյնը
 «Եւ ջահիլ կեանքիս թռթռանք սիրալուր,
 «Յնորք-ապագայ, կենաց վայելքներ,
 «Տենչալի տաղեր՝ սրտիս սիրաւեր...
 «Մեռէք դուք ինձ հետ՝ գոհար երազներ,
 «Կուսական հոգու մանրիկ փշուրներ,
 «Եւ հիւլէ-յոյսեր մի օր բաղդաբեր,
 «Անվիշտ օրերի իմ անմիտ խաղեր...
 «Օ՛ մնաս բարով բարի պատանի՛
 «Թող Աստուած քեզ տո՛յ եռանդ արժանի,
 «Բայց այս ողբալի, տանջալի ժամեր,
 «Մի օր շմօռնաս դու արձանագրել...»
 Եւ սրտաճմլիկ մի խոր հոգոցով
 Հենց ձեռքս թօթուեց ամուր սեղմելով,
 Մի պահնորդախուճը կանգնացրեց իսկոյն
 Մայլակս հարուստ Աղանի բակում,
 Բագմանգամ տանից ջահիլ ու պտուաւ
 Դուրս թռան ուրախ՝ ժպտով ուշազբաւ,
 Սակայն զահրուրիչ սարուուը ուժգին,
 Կնճիռներ զրօշմեց նրանց դէմքերին.
 «Հայրիկ ջան հայրիկ» կոյսը մահամերձ
 Վազելով առաջ հօրը փաթաթուեց,
 «Տուր ձեռքդ հայրիկ մի վերջին անգամ


«Նրա ջերմագին փափկութիւնն ըզգամ.
 «Տես ինչպէս սառած՝ սիրտս չորացած
 «Անիծում է քեզ, ինչպէս ուխտագանց
 «Դաւադիր Սանդրոն՝ սրտիս խորքերում
 «Դեռ պեղում է ուֆ՝ արիւնս ծծում...»
 «Քաղկցի Սանդորն՝ քօռանաս դու քած...»
 Հայրը ծղրտաց աչքերը չռած,
 «Քու գրափառով շատ պիտի սիրուն
 «Ալւան օջախիս կեղս տիս անուն.
 «Ես քեզ կմորթեմ անվախ-անղզամ...»
 Ասաց հարուա ծեց շարաբազդ կոյսին,
 Եւ անգութը ստոր դեռ անբաւական
 Մատերը սեղմեց խենջարի կոթին.
 Ողջ գիւղը խմբուեց. հազիւ աղջկան
 Փրկեցին զագան ծնողի ձեռքից,
 Եւ ներս քաշելով ցուրտ ու մութ օդան,
 Լսուեց հեկեկանք, տիրեց խոր թախիծ.
 Օֆ-ուֆ, ախ ու վախ՝ աման ու համան՝
 Մատաղ քեզ, զուրբան՝ օդայում հնչեց,
 Եւ կարեկցական այն բառերի հետ
 Մի հսկայական ժխոր կազմուեց.
 Տէրտէր կանչեցէք, հեքիմ կանչեցէք՝
 Լուում էր ձայներ ցուրտ մթութեան մէջ,
 Եւ օղը լցում ինչ որ ցաւաբէկ
 Խռկալի տնրոց՝ երկար ու հեծ-հեծ...
 Բայց յանկարծ տիրեց մի սեռելային,
 Խորին լուսթիւն գերեզմանական,
 Մարեց շեփօրը, մարեց վշտագին
 Չիւան ու կական յուսահատական...

Եւ ես երզուեցի այնտեղ սկեռած
 Դաժան երկնքին աչքերս մարած
 Որ մի օր անդորր՝ պատմեմ սրտազրաւ,
 Թէ ինչ տանջանքով—Ա.Ն.Ե.Տ.Ա.Ն. մ.Ե.Ռ.Ա.Լ.:

Միւրիշ Մարիկեանց

1901 թ.

Գ ի շ ա ի շ ա ի շ ա ի շ



«Ազգային գրադարան»



NL0358125

4



Տպագրւում է.

ԻՄ ՅՈՒՇԱՏԷՏՐԻՅ

h r q h r

42741